ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 Թ N 61-Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի 3 - րդ կետի և Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 32 – րդ հոդվածի պահանջների՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի 2017 թ բյուջեն՝ համաձայն N 1 հավելվածի՝
   ա) Եկամուտների գծով՝ 178.429,5 հազար դրամ
   բ) Ծախսերի գծով՝ 203.429,5 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1 – ի.
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2 - ի.
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3 – ի.
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6 – ի.
6. ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 33 –րդ հոդվածի 3– րդ կետի համաձայն՝
   ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
   բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 % - ը:

Ավագանի՝ Կողմ (9), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արսեն Ազիզյան
Արկադի Ալեքսանյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 Թ N 62 -Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2017 Թ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 /2-րդ , 53-րդ հոդվածների պահանջներով՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի զարգացման ծրագրի շրջանակներում 2017 թ իրականացվող կապիտալ ծրագրերը՝ համաձայն N-1 հավելվածի

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

ա) ծրագրի առանձին հատվածների իրականացման օբյեկտիվ անհնարինության կամ խնայողությունների դեպքում նախատեսված գումարն ուղղել առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող այլ խնդիրների լուծմանը:

բ) Անհրաժեշտություն առաջանալու դեպքում ծրագրերի համար նախատեսված գումարի մինչև 20 %-ի չափով կատարելու լրացուցիչ հատկացումներ:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել կապիտալ ծրագրերի նախագծային- նախահաշվային փաստաթղթերի կազմումը, օրենքով սահմանված կարգով կազմակերպել աշխատանքների գնման գործընթացները և ժամանակին ապահովել ծրագրերի կատարումը:

Ավագանի՝ Կողմ (9), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արսեն Ազիզյան
Արկադի Ալեքսանյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված 1

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ՝

		Ծրագրի անվանումը	Գումարը Հազ.դրամ
		ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ /ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ/	
1		Թիվ 2 մանկապարտեզի մասնակի վերանորոգում	300,0
2		Արվեստի դպրոցի մասնակի վերանորոգում	600,0
3		Ներքաղաքային փողոցների ասֆալտի փոսային նորոգում	6.000,0
4		Գրունտային փողոցների խճալցում - բարեկարգում	600, 0
5		Գիշերային լուսավորության անցկացում՝ Պ.Սևակի, Աբովյան, Այվազովսկի, Գրիբոյեդով, Շահումյան և Չարենցի փողոցներում	4.000,0
6		Զբոսայգու մասնակի կառուցապատում	4.000,0
7		Քաղաքապետարանի վարչական շենքի մասնակի վերանորոգում	1.500,0
8		Ընթացիք այլ վերանորոգումներ, նախագծեր, ներդրումներ	4.500,0
		ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ՝	21.500,0
<ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ> ՊՀ ՄԻՋՈՑՈՎ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ			
1		Արոտավայրերի ջրարբիացման 2-րդ փուլի իրականացում	80.000,0
-		Համայնքի համաֆինանսավորում՝ 5%	Դոնոր կազմ
2		Գյուղատնտեսական տեխնիկայի՝ հացահավաք կոմբայնի ձեռք բերում	32.000,0
-		Համայնքի համաֆինանսավորում՝ 20%	Դոնոր կազմ
ՀՀ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ			
1		Բազմաբնակարան նոր շենքի կառուցում	840.000,0
ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ՝			
1		Թիվ 1 մանկապարտեզի շենքի վերակառուցում և շահագործում	180.000,0
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ /ԳՈՒՅՔԻ/ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ՝			
1		N 1 մանկապարտեզին	900,0
2		N 2 մանկապարտեզին	300,0
3		Մշակույթի կենտրոնին /թանգարանի համար/	300,0
4		Արվեստի դպրոցին	300,0
5		Գրադարանին	500,0
6		Մարզադպրոցին	500,0
8		Քաղաքապետարանին	700,0
		ԸՆԴԱՄԵՆԸ՝	3.500,0

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), Ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 Թ N 63 -Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 Թ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2017 թ ընթացքում քաղաքում նախատեսվող միջոցառումները պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի և 41-րդ հոդվածի պահանջներով՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել 2017 թ ընթացքում քաղաքում անցկացվող միջոցառումների ծախսերը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝

ա/.հսկողություն սահմանել միջոցառումների անցկացման նպատակով կատարվող ծախսերի նպատակային օգտագործման նկատմամբ:

բ/. մոբիլիզացնել աշխատակազմի և ՀՈԱԿ ուժերը՝ միջոցառումները բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար:

3.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ անհրաժեշտության դեպքում միջոցառումների համար նախատեսված գումարների չափերի միջև կատարելու համարժեք փոփոխություններ:

Ավագանի՝ Կողմ (9), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արսեն Ազիզյան
Արկադի Ալեքսանյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար Գ. Աբրահամյան

Հավելված 2

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2017 Թ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ծախսի չափը /ՀՀ դրամ /
1	Հայոց Ազգային Բանակի օրվան նվիրված միջոցառում	150000
2	**Կանանց և մայրության տոնին նվիրված միջոցառում**	**300000**
3	Եղեռնի օրվան նվիրված հիշատակի միջոցառում	100000
4	Հաղթանակի և խաղաղության տոնին նվիրված միջոցառումներ	150000
5	Շրջանավարտների հավաք	150000
6	Ապարանի հերոսամարտի տարելիցին նվիրված տոնակատարություն	400000
7	Երեխաների միջազգային օրվան նվիրված միջոցառում	100000
8	**Բուժաշխատողի օրվան նվիրված միջոցառում**	**100000**
9	Գիտելիքի, գրի և դպրության օրվան նվիրված հանդիսություններ	300000
10	ՈՒսուցչի տոնին նվիրված հանդիսություն	150000
11	Սպորտլանդիայի քաղաքային բաց առաջնություն	100000
12	Ֆուտբոլի քաղաքային բաց առաջնություն	200000
13	Շախմատի քաղաքային բաց առաջնություն	150000
14	**Քաղաքի ամանորյա զարդարում և միջոցառումների անցկացում**	**650000**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	3.000.000

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016 Թ N 64 -Ա

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ,,Գույքահարկի մասին,, օրենքի 15/3-րդ և 4-րդ, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, օրենքի 13-րդ հոդվածների պահանջների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝
1 Ապարանի համայնքի ներքոհիշյալ բնակչին տալ հարկային արտոնություն՝ համաձայն աղյուսակի:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել համապատասխան ձևակերպումներ:

աղյուսակ

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ

N	Ազգանուն, անուն	Գույքահարկ		Հիմնավորում
		Ապառք	Տույժ	
1	Գեղամյան Արտակ	41000	0	Ծառայում է Ազգային բանակի պայմանագրային գնդում, ունի 2 անչափահաս երեխա, ընտանիքի սոցիալական վիճակը բավարար չէ:

Ավագանի՝ Կողմ (9), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արսեն Ազիզյան
Արկադի Ալեքսանյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան